

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍԻՆ

Դ. Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Սկսած Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստի» մեկնիչներից մինչև ժամանակակից դպրոցական դասագրքերի կազմողները, շնայած մասնակի տարբերություններին, դերանունների տեսակները ընդամենը երեք են՝ հետևյալ սահմանումներով՝ անձնական դերանունները ցույց են տալիս անձ՝ խոսքի մեջ զրվելով անձի անվան փոխարեն, ցուցական դերանունները մատնացույց են անում առարկա, հատկանիշ, թիվ և այլն. փոխադարձ դերանուններն լսելի րաներն են, որ փոխարինում են փոխդորձողությամբ կապված առարկաներին. հարցականները՝ ղոյականի, ածականի, թվականի, մակբայի մասին հարցում բովանդակող բառեր են, հարաբերականները նույններն են՝ առանց հարցումի (և ցույց են տալիս զանազան հարաբերություններ, որոշյալ դերանունները հայտնի առարկայի փոխարինող բառեր են համարվել, անորոշներն էլ՝ անհայտ առարկաների, իսկ ժխտականները՝ ղոյականի (կամ այլ խոսքի մասի) ժխտում են ցույց տալիս:

Ի՞նչ հիմքով են բաժանված դերանունները. անձ ցույց տալ, մատնացուցում ցույց տալ, հարցում ցույց տալ, հարաբերություն, անորոշություն, որոշակիություն, միտում ցույց տալ, փոխդորձողությամբ առարկա ցույց տալ:

Ինչպես տկնառու է, բացակայում է դասակարգման միասնական հիմքը: Հայ լեզվաբանության մեջ դերանունների դասակարգման միասնական իմունքի որոնումներում ղիտական կարևոր արդյունքների է հասել բանասիրական ղիտությունների ղոկտոր Ս. Աբրահամյանը: «...Կարելի է ասել, — ղրում է նա, — որ դերանունների ունեցած հարաբերության իմաստով ընդհանուր առմամբ արտահայտվում է նաև խոսողի հարաբերությունը կամ վերաբերմունքը ցույց տրվող առարկայի, հատկանիշի նկատմամբ»¹:

Դիտարկենք «ղա» և «ղու» դերանունները. առաջինը կոչված է ցուցական այն հիմքով, որ ցույց է տալիս (մատնացուցման իմաստով) առարկա, իսկ երկրորդը՝ անձնական այն հիմքով, որ ցույց է տալիս (բովանդակության իմաստով) անձ և սրան էլ ավելացրած այն, որ ղրվում է անձի անվան փոխարեն:

Քայքայ մատնացույց անելը և ցույց տալը (իմաստ բովանդակելը) տարբեր բաներ են, ինչպես մարդու իրանն ու նրա ներքնաշաղկիր, որոնք շնայած ամենասերտ շփման՝ արտաքին կապի մեջ են:

Այս, այն, սա, այլսիսի, այսֆան, նույնչալի, այսֆաներուղ, այնտեղ, նույնտեղ, այդժամ և այլն, կոչվում են ցուցական դերանուններ. սակայն

¹ Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, էջ 61:

միավորված բառերը, ինչպես ականհայտ է, բովանդակության իմաստով գոյական են, ածական, քվական, մակբայ՝ ցուցում զրսեորելու ընդհանրությամբ, «...որոնք մատնանշում են առարկան, սրանց հատկությունները և քանակը... բայց չեն կոչում զրանք»²:

Ուրեմն՝ չնայած բովանդակության խիստ դանդաղության՝ միավորման հիմքը ցուցման հարաբերությունն է։ Սակայն տեսնենք՝ այդ հարաբերությունը միայն ցուցական կոչված գերանունների մենաշնորհն է, արդյոք.

Նորից դիտարկենք «դու» անձնական և «սա» ցուցական գերանունները. առաջինը, ուրեմն, այսպես է կոչվել անձ բովանդակելու (կամ անձի անվան փոխարինելու) պայմանով, երկրորդի համար, սակայն, բառի բովանդակությունը անտեսված է և, որպես բնութագրիչ հատկանիշ, առձուլված է ցուցման հարաբերությունը։ Բայց հիշյալ գերանունների տարբերությունը, ըստ էության, հանդում է միմիայն այն բանին, որ սրանցից մեկն անձ է ցույց տալիս, մյուսը՝ իր (երբեմն էլ՝ նորից անձ), իսկ խոսքի մասային առումով դա տարբերություն էլ չէ ճիշտ այնպես, ինչպես Պետրոս և Երկինք բառերի միջև՝ դոյություն ունեցողի իմաստով։ Հորինված տարբերությունը սուբյեկտիվ հարաբերության զրսեորման զանազանությունն է, որն առաջ է բերել զուտ ցուցման հարաբերության պատրանք։ «Դու եկ»։ Եթե այսպիսի հրամանով դիմենք մարդկանց մի մեծ խմբի մեջ կանգնած որևէ մեկին՝ առանց ցուցման (հայացքի և ալնի միջոցով)՝ ապա մենք սպասված արդյունքին չենք հասնի. իսկ եթե անմիջաբար խոսակցին է ուղղվում դու-ն, ապա հատուկ ցուցման անհրաժեշտություն չի զգացվի, քանի որ այդ հարաբերության մեջ խոսակցին իր դուրքամբ իսկ ցուցադրված է արդեն։ Նույնը տեղի չի ունենա, արդյոք, դա գերանվան հետ ահա այս դեպքում. «Դա տուր»։ Եթե այդ դա-ն իր նմանների հետ մի խմբում է, ապա հրամանը կատարողը ստիպված պիտի հարցման միջոցով ճշտի, թե դա-երից հատկապես ո՞րն է հրամայողի սուբյեկտիվ հարաբերության ոչորտում։

Ուրեմն՝ դու և դա գերանունների մեջ, վերը նկարագրած իմաստով, ու մի տարբերություն չկա։ Եթե այդ ճիշտ է, ապա սրանք քերականական տարբեր կարգերի մեջ գետնադրու ո՛չ միայն առհիմն է, այլև հարցը խճճում է մինչև այն աստիճան, որ ձևաբանական ու շարահյուսական այլազան առանձնահատկություններ ունեցող գերանունները միավորվում են այնպիսի խմբերի մեջ, որտեղ իրենց «ապօրինի բնականությամբ» առաջ են բերում էլ ավելի մեծ բարդություններ։

Եվ իսկապես՝ ի՞նչ կապ կա, օրինակ, սա և այսպիսի գերանունների միջև. որ միավորված են ցուցական անվան տակ, երբ սա-ն ցույց է տալիս առարկա խոսողի հարաբերությամբ, իսկ այսպիսին՝ առարկայի ուրակը, և չնայած նույն հարաբերությամբ։ Եթե, ուրեմն, սուբյեկտիվ հարաբերությունը միավորում է ես, սա, այսպիսի, բոլորը, ով, ինչ, այսֆան և նման այլ բառեր ապա նյութական աշխարհի պրոցեսները, գոյեր, ուրակ ցույց տալն այն հիմքը պետք է դիտվի, որով նրանք տարաբաշխվում են։ Առարկա, հատկանիշ, թիվ, գործողություն սուբյեկտիվ, այսինքն՝ միջնորդավորված բեկմամբ ցույց տալը երբեմն ականհայտորեն զրսեորվում է ոչ այլ կերպ, քան ցուցման հարաբերությամբ. մնացած դեպքերում այդ հարաբերությունը կարելի է բացա-

հայտել մտացի վերլուծմամբ, և այս իմաստով էլ բոլոր դերանունները, առանց բացառության, կաբելի կլինելու կոչել ցուցական:

Անիմաստ է, ուրեմն, դերանունների մի խումբ՝ հակադրել մյուսներին՝ ցուցման հարաբերություն ունենալու առանձնահատկությամբ. ավելին՝ հասկացության միասնական հիմքով բաժանելու անհրաժեշտությունը շանտեսելու դեպքում՝ դերանունների մյուս խումբն էլ միասնաբար պիտի կոչվեր գոյցում շարունակող, կամ ոչցուցականներ:

Եթե սուբյեկտիվ հաբերությունների բովանդակությունը միավորում է դու, ես, այսպիսի, բոլոր, ով, ինչ, այսպես և այլ բառերը դերանուն խոսքի մասի մեջ, ապա՝ առարկա, քիվ, ուսկ, գործողություն բովանդակելու տարբերություններն էլ նրանց կղասակարգեն առանձին տեսակներին:

Այսպիսով՝ դերանվան մեջ նրա նյութական-օբյեկտիվ բովանդակությունն այն հիմքն է, որով սրանք ստորաբաժանվում են ըստ տարատեսակների, իսկ սուբյեկտիվ հարաբերության բովանդակությունն էլ, ընդհակառակը, դրանք միավորում է մեկ խոսքի մասի մեջ:

Ինչպես կոնկրետ խոսքի մեջ, այնպես էլ երբեմն նրանից դուրս, դերանվանական բովանդակությունը երկփեղկվում է իր բաղադրիչներին, և սուբյեկտիվ հարաբերությունը երևան է զալիս բացարձակ մերկությամբ՝ «աղատադրված» նյութական բովանդակության ծանրությունից: «Բոլորը հավաքվեցին», «Բոլոր տղաները հավաքվեցին». առաջին նախադասության մեջ դերանունը երևան է հանել նյութականի ու հաբերության ձուլածո ամբողջությունը, երկրորդում, սակայն, հօգս է ցնդել նյութը, և «բոլոր» բառը հանդես է եկել որպես հարաբերության մարմնավորող (որպես հոգ):

Նարահյուսական կիրառություններում դերանվան սուբյեկտիվ հարաբերության բովանդակության սրման արտահայտությունն է այն իրողությունը. որ խոսքի այդ մասը կոնտեքստում հանդես է դալիս որպես բառեր ու նախադասություններ հարաբերելու հիմնական միջոց՝ այդտեղ ավելի լայն կիրառություն ստանալով, քան հենց դրա համար կոչված շղկապները: Եթե այս իմաստով շմտենանք խնդրին, ապա շարահյուսության դասադրքերում այսպես կոչված հաբերական բառերը որեւէ մեկնաբանություն չեն կարող ստանալ. ըստ խոսքի մասերի՝ դրանք դերանուններ են, ըստ նախադասության՝ անդամների՝ ենթակա, խնդիր, պարագա և այլն. իսկ ի՞նչ է հաբերական բառ հասկացությունը. չէ որ այն բառերի դասակարգման մեջ մտցնում է մի երրորդ և ավելորդ անդամ, որն անմեկնելի է տվյալ հարաբերությունների շրջանակներում:

«Մեզ մոտ կլինի ընկեր՝ Լազարյանը, որը վասախոսություն կկարդա». այս նախադասության մեջ «որը» դերանունը նյութական բովանդակությամբ դարձել է ենթակա, իսկ սուբյեկտիվ հարաբերության բովանդակությամբ՝ ստանձնել է շղկապի դեր:

Սակայն մինչև դերանունների դասակարգմանն անցնելը քննարկենք մի բարդ ևս:

Դերանունները բովանդակությամբ կոնկրետ-ղղայական են, բայց ձևով էլ՝ նույնքան ընդհանրական. «սա» ձևի մեջ իրենց «մերկությունն» են ծածկում օբյեկտիվ իրականության տարբերակված բոլոր առարկաները՝ զղղայական (կամ էլ զղղական-հիշողության պատկերներ) ընկալման միջոցին, և հենց այդ ձևն էլ, բառին ինքնուրույն դոյություն իրավունք տալով, նրան

դուրս է բերել խոսքային հարաբերություններից, որպես վերջնական ձևավորում ստացած բառ-միավոր, և ձևի ընդհանրացնող ազդեցությամբ ստեղծել զգայականի մի առանձնահատուկ վերացարկում: Եթե «սա»-ն, «ալալիսին» «ալալես անել»-ը և այլն «կոնկրետ» են բովանդակությամբ, ապա նույնքան էլ վերացական են իրենց այն ձևերով, որոնցով հանդես են գալիս անսահման մեծ թվով զգայական-կոնկրետ առարկաներ, որակներ, պրոցեսներ:

Եթե մինչև այժմ կրկնել ենք այն պնդումը, թե գերանվամբ ցույց է տրվում զգայական ընկալման ոլորտում գտնվող կոնկրետ առարկան, կոնկրետ պրոցես և այլն, ապա այժմ պիտի ավելացնենք, որ այդ կոնկրետությունը պետք է ընդունել հաբեբականորեն, որովհետև թեկուզ և զիջակտիկ նկատառումներով այս դեպքում չի կարելի ձևը քննարկել անջատ բովանդակությունից՝ առանց վախի, թե չենք հեռանա երևույթի ուսումնական հարաբերից:

Ի՞նչ է սա-ն. սա-ն գգայական ընկալման ոլորտում գտնվող կոնկրետ առարկան է իսկալես, երբ ես խոսողն եմ տվյալ պահին:

Աշխարհի անսահման մեծ թվով մարդիկ նույնքան թվով պահերին կարող են խոսողների դերում հանդես գալ, և աշխարհի անսահման մեծ թվով առարկաներն էլ կարող են լինել զգայական ընկալման ոլորտում. եթե այդպես է, ուրեմն, սա գերանունն էլ խոսքից դուրս ո՛չ թե ցույց է տալիս կոնկրետ խոսողի, այլ ընդհանրապես խոսողի զգայական ընկալման ոլորտում գտնվող «ընդհանրական» առարկան, որի կոնկրետությունն ամեն անգամ տրվում է յուրաքանչյուր խոսքի ակտում:

Այսպիսով՝ դերանուն կոչվում են բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և քվական կարգ՝ սուբյեկտիվ (խոսողի) հաբեբությամբ:

*

Ինչպես վերևում ասել ենք, գերանունները ըստ տեսակների պետք է դասակարգվեն արտահայտած բովանդակության ընդհանրությամբ. այս սկզբունքն էլ կիրառելով՝ մենք զրանք ստորակարգում ենք հետևյալ տարատեսակների՝ գոյականական, ածականական, քվականական, բայական, մակբայական:

Գոյականական դերանուն են կոչվում բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս անձ և առարկա սուբյեկտիվ հաբեբությամբ, զրանք են՝ ես, դու, նա, սա, դա, միևնույնը, ամենք, յուրաքանչյուր, ողջը, ով, ոմն, մեկը, ինչ և այլն:

Բացի ես, դու, ով, ոմն, ինչ գերանուններից մյուսները հավասարապես նշանակում են և՛ անձ, և՛ իր, այս իմաստով էլ ավելորդ կլինի գոյականական գերանվան մեջ մտցնել անձնականի և իրայինի տարբերատեսակներ, մանավանդ որ գոյականների նկատմամբ նույնպես այդ տարբերակումը նկատի է առնվում սոսկ փաստի նշումով, քանի որ, ինչպես գերանունները, այնպես էլ գոյականները այդ առումով ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ չեն զրսեորում:

Գոյականական գերանունները (ինչպես և մյուսները) իրենց ներսում դասակարգվում են երեք խմբերի՝ որոշյալ, անորոշ, ժխտական. այսպիսի դասակարգումը պայմանավորված է սուբյեկտիվ հարաբերության բնույթով, և ոչ թե բառիմաստի նյութական բովանդակության առանձնահատկությամբ:

ներով: Ուրոշյալ՝ ևս, դու, նա, մենք, դուք, նրանք, սա, դա, ինքը, ամենքը, յուրաքանչյուրը, ողջը, ամբողջը, այսինչը, այնինչը, ուրիշը և այլն, անուրոշ՝ ով, ինչ, մեկը, ժխտական՝ ոչ ոք, ոչինչ:

Ուրոշյալ են կոչվում գոյականական այն դերանունները, որոնց գույց տված առարկայական բովանդակությունը սուբյեկտիվ հարաբերությամբ ուրոշյալ է. օրինակ՝ *Գույց դերանունը ցույց է տալիս խոսակցի անձնավորությունը՝ խոսող սուբյեկտի հարաբերությամբ, և այդ հարաբերության մեջ էլ որոշակի է, թե ով է նա, ասենք, Կիրակոսն է. կամ՝ դա-ն մի առարկա է (անձ է), որի ինքնությունը տրված է սուբյեկտին՝ հարաբերությամբ. «դա լավն է» սուբյեկտին հայտնի է, որ դա-ն ոչ այլ ինչ է, և՛ թե ոչ, ասենք, ձմեռով:*

Անուրոշ են կոչվում այն գոյականական դերանունները, որոնց գույց տված առարկայական բովանդակությունը անուրոշ է սուբյեկտիվ հարաբերությամբ. օրինակ՝ *ով դերանունը ցույց է տալիս անձ՝ խոսող սուբյեկտի հարաբերությամբ, սակայն այդ հարաբերության մեջ էլ անորոշ է մնում անձի ինքնությունը: «Ինչ ուզում ես, վերցրու» խոսողին անհայտ է, թե ինչ է ինչը:*

Ժխտական են կոչվում գոյականական այն դերանունները, որոնց գույց տված առարկայական բովանդակությունը սուբյեկտիվ հարաբերությամբ ժխտվում է. օրինակ՝ *ոչ ոք դերանունը ցույց է տալիս խոսողի հարաբերությամբ անձի ժխտումը: «Ոչինչ պետք չէ» նախադասության մեջ դերանվամբ ժխտվում է սոսկալական բովանդակությունը՝ նույնպես սուբյեկտիվ հարաբերությամբ:*

Գոյականական դերանունները հոլովվում են. միայն հաղվաղեպ ուղղական ունի «ոմն» դերանունը. և՛ թե, իհարկե, ընդունենք, որ մյուս հոլովաձևերը ֆունկցիոնալ կիրառություն են գտնում մեկը դերանվան հոլովաձևերում: Սակայն այդ ենթադրությունը հավանական չենք համարում, որովհետև ոմն բառի մեջ ընդգծված է սուբյեկտիվ հարաբերության բովանդակությունը, իսկ այս դեպքում դա մոտենում է այս, այդ, այն և նման «դերանուններին», որոնք նույնպես չեն հոլովվում: Կարծում ենք, որ հիմնավոր չէ այն ենթադրությունը ևս, ըստ որի հիշյալ վերջին դերանունները, իբրև թե, շունենալով ուղղական հոլովաձև, մյուս հոլովաձևերում ձուլվում են սա, դա, նա դերանուններին: Այդ, այս, այն «դերանունները» չեն հոլովվում, որովհետև նրանցից դուրս է մղված նյութական բովանդակությունը, և դրանք մնացել են սոսկ սուբյեկտիվ հարաբերության կրողներ: Մեր կարծիքով դրանք հոլեր են:

Սույն, դույն, նույն, ողջ, ամբողջ, բոլոր, ամեն, այլ, ուրիշ «դերանուններն» էլ հոլովվում են (նյութական բովանդակություն են ստանում) հոգի միջոցով. առանց հոգի դրանք նույն բովանդակությունն ունեն, ինչ այս, այդ, այն դերանունները:

Գոյականական դերանունները նյութական ու սուբյեկտիվ բովանդակության միասնականությամբ զրոստորում են շարահյուսական կիրառությունների այն բոլոր հնարավորությունները, ինչ դրանց հարաբերակից գոյական անունները, և սուբյեկտիվ բովանդակությունը գոյականների նկատմամբ դրանց տալիս է այն «առավելությունը», որ խոսքի մեջ սրանք միաժամանակ հանդես են գալիս բառահարաբերությունների ու մտքերի հարաբերությունների ֆունկցիաներով:

Հետաքրքիր է ու շահակալի և ուր դերանվան աղերսների հարցը, որին այժմ վերստին գեմ ելանք. «ը» հոգը, օրինակ, բոլոր բառին բերում է սուբ-

յեկտիվ հարարերության բովանդակություն, և «բոլորը սիրում են Գաղիկին» նախադասության մեջ այդ բառը ենթակայի դերով է հանդես գալիս. սակայն, բոլոր (առանց հոգի) նախադասության որևէ անդամի դերում հանդես գալ չի կարող. «Բոլոր տղաները կենտուրալս են» նախադասության մեջ այդ բառով ոչ թե բնութագրվում են աղաները, այլ պարզապես դրսևորվում է խոսողի վերաբերությունը նրանց ամբողջության նկատմամբ, իսկ որ սուբյեկտիվ վերաբերությունը մտքի անդամ լինել չի կարող, այդ բանում կարելի է համոզվել նաև տրամաբանությունների և ձայնարկությունների օրինակով: Այժմ այդ անալոգիայով մոտենանք որ և ուր բառերին. առաջինը շաղկապ է համարվում իսկ երկրորդը՝ դերանուն, սակայն պարզ չէ, որ դրանց տարբերությունը միայն ը հոգն առնելու կամ չառնելու մեջ է ճիշտ այնպես, ինչպես բոլոր և բոլորը, ողջ և ողջը, ամբողջ և ամբողջը ու այլ բառերի: Որ բառը հոգով ստանում է օբյեկտ-սուբյեկտի միասնական նշանակություն, երբ կարող է միաժամանակ ի՛ հարաբերություն ցույց տալ՝ կապելով նախադասություններ (շաղկապի դերով), և՛ ցույց տալ նյութականություն՝ հանդես գալով նախադասության անդամի դերում:

Շենքեր, որ կառուցված է տուֆից, գեղեցիկ է:

Շենքեր, ուր կառուցված է տուֆից, գեղեցիկ է:

Առաջին նախադասության մեջ որ բառը անխառն սուբյեկտիվ բովանդակությամբ շաղկապ է, երկրորդում, սակայն, դերանվան երկրորդ չափի սուբյեկտիվ կողմով շաղկապի դեր է խաղում, իսկ որպես նյութական բովանդակության կրող՝ զոյականի՝ հանդես գալով որպես նախադասության ենթակա:

Միմյանց, իրար, մեկմեկու բառերը վերաբերա՞ծ դերանուններ են համարվում՝ տոգործողությամբ կապված առարկաների անվան փոխարեն դրվելու պատճառով. ըստ որում՝ երեք բառերն էլ ունեն գրեթե միևնույն իմաստ, ձևաբանական միևնույն առանձնահատկությունները, շարահյուսական միևնույն կիրառությունները: Նկատված է, սակայն, որ հոլովվելով՝ դրանք չեն ստանում ուղղական հոլովաձևը միայն: Սա նշանակում է, արդյոք, թե բառը ընդհանրապես կարող է դուրկ լինել իր այն ձևից, որով զիտակցվում է հասկացությունը և որով նա տեղ պետք է գտնի բառարանում՝ որպես բառիմաստի կրող:

Բոլոր բառերը (ինչպես թեթև, այնպես էլ չթեթև) ունեն իրենց բառաբանային այն ձևը, որի մեջ վերացարկված է հասկացությունը, այլապես չկա ինքը՝ բառը: Բառերի մի մասը խոսքի մեջ հանդես է գալիս թեթև ձևերով, մյուսը՝ չթեթևած: Առաջին դեպքում թեթևանալով արտահայտվում են այլևայլ հարաբերություններ, երկրորդ դեպքում՝ հենց բառերի ուղիղ ձևերով էլ արտահայտվում են նույնպես հարաբերություններ, բայց և վերաբերություններ: Այսպես, որոշք են միմյանց, իրար, մեկմեկու բառերի այն ձևերը, որոնցով նրանք, անկախաբար նախադասության մեջ ստանձնած իրենց դերից, մարմնավորում են հասկացությունը, դրսևորում խոսքի մասային առանձնահատկությունները և դրանցով իսկ տեղ գտնում բառարաններում: Եթե ընդունենք, որ օրինակ, իրար բառը մշտապես սևական (տրական, հայցական) հոլովաձևում է, ո՞րն է նրա խոսքի մասային ձևը: Կարող էր մի լիզվի հսկայական բառապաշարի մեջ միայն երեք բառ կալմել մի այնպիսի բացառություն, որ խախտվեր սկզբունքային օրինաչափությունը, երբ բառը հանդես գար միայն հոլովաձևերում՝ դուրկ լինելով հիմնական ձևից՝ հասկացության և խոսքի մասային արժեքները ներառելու հնարավորությունից: Պարզ է, որ այդպիսի բացառու-

թյուն չպետք է ճանաչվի: Բայց նախքան այդ հարցին պատասխանելը փորձենք պարզել հիշյալ բառերի ձևաբանական առանձնատկությունները, որոնք կօգնեն մեզ հասկանալու այդ «բացատրության» իմաստը: Իհարե, միմյանց, մեկմեկու բառերը, պարզ է, գոյականներ չեն այն իմաստով, ինչ ըմբռնվում է վերջին (գոյական) հասկացությամբ, որովհետև հիշյալ բառերի մեջ, բացի նյութական իմաստից, կա նաև սուբյեկտիվ հարաբերության իմաստ (ինչպես ընդհանրապես դերանունների մեջ) և բացի այդ՝ առարկաների փոխադարձ կապի դադար:

Իհարե բառով ընկալում ենք անձեռ կամ առարկաներ, որոնք պատկերավորվում են սուբյեկտիվ հարաբերությամբ և փոխադարձ կապի մեջ են: Այսպիսով՝ այդ բառի բովանդակությունը ավելի «բաղմախորհուրդ է» քան «սովորական» դերանուններինը. նյութական բովանդակություն, սուբյեկտիվ հարաբերություն և օբյեկտիվ հարաբերություն (վերջինս տրված է հոլովածակ կարծրացումով): Այստեղից էլ՝ եթե, ասենք, ԲԱՐ ԳՈՅԱԿԱՆԻ խոսքից դուրս իր այդ գրությունը ուղղական հոլովածակ չէ, այլ միայն հասկացությունը մարմնավորող բառարանային միավոր, ապա միմյանց բառը նույնպես իր այդ ձևով (հոլովածակ քերականությամբ) ոչ թե սեռական (տրական, հայցական) հոլովածակ է, այլ հասկացություն կրող բառ, բառարանային միավոր: Կոնկրետ խոսքի մեջ (նրանից դուրս մեռած թվացող) ձևը վերականգնանում է՝ կանխելով բառի գործածությունը ուղղական հոլովածակում. ինչո՞ւ: Որովհետև միմյանց, իհարե, մեկմեկու բառերը, ինչպես ասել ենք, ունեն նույն օբյեկտիվ հարաբերության իմաստ. այդ «բեռով» էլ նրանք չեն կարող լինել զործող սուբյեկտ. մտքի (լեզվի) անգամենթակա դառնալու համար բառը պետք է ազատ լինի իրահարաբերության իմաստից, իսկ վերջինս, սակայն, սերտաձած է հիշյալ բառերի մեջ:

«Միմյանց» բառը, նյութական բովանդակությունը երկու տեսակի հարաբերությունների մեջ «ներծծած», մտել է դերանուն խոսքի մասի մեջ, իսկ Միմյանց սիրում են՝ նախադասությունում ուղիղ խնդիր-անգամ է: Ենթակա չի կարող դառնալ, ինչպես ասել ենք, որովհետև փոխադարձ կապի հարաբերությունը արգելակում է դեպք, բայց և ազատ էլք տալիս բացառման, ներառման, ներգործման, միջոցի և այլ հարաբերությունների զրահումանը:

Կարծում ենք, որ արդեն հասկանալի կլինի, թե ինչու գոյականական դերանունների շարքում կառանձնացվի մի ենթատեսակ՝ «փոխադարձ գոյականական դերանուն» նախկին անվանումի պահպանմամբ, որը կունենա հետևյալ սահմանումը. փոխադարձ են կոչվում գոյականական այն դերանունները, որոնք ցույց են տալիս առարկաներ (անձեր) սուբյեկտիվ հարաբերությամբ և փոխադարձ կապի մեջ լինելու օբյեկտիվ հարաբերությամբ: Փոխադարձ դերանունները հոլովվում են՝ շտանալով ուղղական հոլովածակ:

Ածականական դերանուն են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի որակ՝ սուբյեկտիվ հարաբերությամբ, դրանք են՝ ախպիսի, աղպիսի, ալմպիսի, ռույնպիսի և այլն: Ածականական դերանունները չունեն որակի տարբերակում ինչպես ըստ աստիճանների, այնպես էլ ըստ հարաբերականի ու որակականի: Այս հանգամանքը պարզ մի զրահումում է այն բանի, որ դրանք առարկայի որակը ցույց են տալիս մի հարաբերությամբ (սուբյեկտիվ), որի մեջ այն (որակը) արվում է զգայական ընկալման միջոցով: Եթե կարմիր ածականը, օրինակ, դրոշակ գոյականի որակն է ցույց տալիս օբյեկտիվ արտապատկերմամբ, ապա «ախպիսի»-ն գոյականի որակն է

ցույց տալիս սուբյեկտիվ արտապատկերմամբ. դերանունը, ուրեմն, նույնի արտապատկերումն է խոսողի զգայական ընկալման միջոցին, և վերջին դեպքում առարկայի որակը (կարմիր, սպիտակ, թե ավելի կարմիր, կամ ամենակարմիր) տրվում է զգայական պատկերի ձևով:

Մեկը հետևյալ նախադասությունն է արտաբերում. «Այսպիսի ծառ լինում է միայն ջունգլիներում»: Թե ինչպիսին է տվյալ ծառը՝ հայտնի է այդ նախադասությամբ օբյեկտիվ իրականության պատկերն վերարտադրող սուբյեկտին (բարձր, հաստ, շատ բարձր, հուժկու, դաճաճ, վեհաշուք, փշատերև, մշտադալար և այլն):

«Այսպիսի երգ ինձ դուր է գալիս» նախադասության մեջ առաջին բառով ներկայացվում է մի ինֆորմացիա, որում վզայաբար տրվում է նյութական բովանդակությունը (մեղիդիկ, կրքոտ, խրոխտ, տհաճ, ձանձրալի, ոգեշունչ, առույգ և այլն). «Այսպիսի երգ» նաև մի երգ է, որի որակը հայտնի է սուբյեկտին, այդ պատճառով էլ նա (խոսողը) հարկ չի համարում անվանել այն, և ինքնին հասկանալի է՝ ինչպես որակի աստիճանով, այնպես էլ ըստ հարաբերականի և որակականի տարբերակումով (ասենք՝ ամենահաշալի երգ, հայկական երգ)³:

Ածականական դերանունները առարկայի որակը սուբյեկտիվ հարաբերությամբ ցույց տալով, ավելի մեծ ինֆորմացիա կարող են պարունակել, քան «ստվորական» ածականները, և դրանց դոյությունը մեծ մասամբ պայմանավորված է վերջին հանգամանքով: Բաղական «Ջարմուհի Բեթը» վեպում հերոսուհիներից մեկի՝ օրիորդ Ժողեֆին Վր Տեմենիքի բնութագիր մի ամբողջ էջում տալով՝ ապա ավելացնում է. «Այսպիսի կինը կարող է ապրել միայն հրեշտակային ներողամտության մթնոլորտում»: Այսպիսի բառը ամփոփելով ամբողջ նկարագիրը, խտացնում է բաղմամբիվ և բաղմամբիսի որակումներ որպես դրանց միացումն. որևէ ածականով, սակայն այդօրինակ ընդհանրացում չէր կարելի անել. այդպիսի դերանվամբ ընթերցողի մոտ վերականգնվում է հերոսուհու ամբողջական պատկերը՝ զգայական մանրամասնությունների մեջ. ուրեմն՝ բաղմամբիվ ածականներ իրենց սպառիչ ամփոփումն են գտնում մեկ դերանվամբ:

Ածականական դերանունները հոլովվում են ճիշտ այնպես, ինչպես դրանց հարաբերակից ածականները (միայն հոգ ստանալով): Սրանք նույնպես հաճախ հանդես են գալիս սոսկ սուբյեկտիվ հարաբերությունների կրողներ. «Ինչպիսի՜ հրաշալի աշխատանք ունեւ պատանին». «Ինչպիսի՜ բառը չունի այլևս նյութականի (որակի) և սուբյեկտիվ հարաբերության միասնությունը, որ նկատելի է, օրինակ, ահա այս նախադասության նույն բառի մեջ. «Այսպիսի փամին կարող է արմատախիլ անել հաստաբուն ծառեր»: Վերջինում «այսպիսի»-ն բովանդակում է որակ և դրա սուբյեկտիվ ընկալումը, ու եթե այն («այսպիսին») երկրորդ նախադասության մեջ փոխարինենք ուժեղ բառով, ապա՝ «Ուժեղ փամին կարող է արմատախիլ անել հաստաբուն ծառեր» նախադասության մեջ կստացվի իրականության մի այնպիսի «պատճենավորում», որից հետագույն է սուբյեկտը՝ կողք-կողքի դնենք այդ նախադասությունները

3 Այստեղ զգուշանալով թյուրմեման հնարավորությունից. «զգայական ընկալումը՝ չպետք է մշտապես ընդունել անպայման բառացիորեն, այդպիսի ընկալում կլինի նաև, երբ խոսողը հենվում է հիշողությունների կամ նկարագրությունների պատկերների վրա, և վերջիններս ներկայացվում են որպես «ընկալվող» զգայական պատկերներ:

և վերստին ի մոտո ղենենք. «Այսպիսի ֆամին կարող է արմատախիլ անել հաստաբուն ծառեր»։ «Ուժեղ ֆամին կարող է արմատախիլ անել հաստաբուն ծառեր»։ Ակնհերձ է, որ առաջին նախադասությամբ սուբյեկտը «կողմնակի հակեցողի էպիկական հանդարտությամբ» արտապատկերում է աշխարհի օբյեկտիվ մի երևույթ, երկրորդ նախադասությամբ, սակայն, սուբյեկտը «լիրիկական ղեղումով» «եներկա է» նույն իրականության և նույն երևույթի նկարագրությանը որպես նրա անդամ։

Ածականական դերանունները լինում են ուռնչյալ, անուռնչ, ժխտական, բոլոր մասին էլ նույնը կարելի է ասել, ինչ արդեն խոսվել է գոյականական դերանունների նույնպիսի ստորակարգումների շուրջը, ուստի և չենք կրկնում։

Ուռնչյալ են այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի դերանունները։ Անուռնչ են՝ ուրպիսի, ինչպիսի ժխտական է՝ ոչ մի տեսակի։

Թվականական դերանուններ են կոչվում բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի թիվը, բաշխումը, թվական կարգ՝ սուբյեկտիվ հարաբերությամբ. դրանք են՝ այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսքանական, այդքանական, նույնքանական, նույնքանեւորը և այլն։

Թվականական դերանունները լինում են ուռնչյալ, անուռնչ, ժխտական։ Ուռնչյալներ են՝ այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսքանական, այդքանական, այնքանական, նույնքանական, այդքանեւորը, այսքանեւորը, այնքանեւորը, նույնքանեւորը։ Անուռնչները՝ ուրքան, ինչքան, ուրքանական, ինչքանական, ուրքանեւորը, ինչքանեւորը, ուրքանեւոր, քանի, քանիական, քանիեւորը։ Ժխտականները՝ ոչ մի, ոչ մի հատ, ոչմիեւորը։

Թվականական դերանունները հոլովվում են հարաբերակից թվական անունների օրինակով (երբ հոգ են ստանում)։

Բայական դերանուններ են բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողության վիճակ, եղելություն, եղելության վիճակ, վարմունք, վարմունքի վիճակ սուբյեկտիվ հարաբերությամբ. դրանք են՝ այսպես (այս) անել (մշակել, պատրաստել), այդպես (այս) լինել (ղեղնել, հասունանալ), այսպես վարվել (վիճել, նստել, կանգնել), այդպես (այդ) արած (մշակած, պատրաստած), այդպես (այդ) եղած (ղեղնած, հասունացած), այդպես վարված (նստած) կանգնած, և այլն։

Նյութական աշխարհն իր առարկաներով ու որակներով լեզվի մեջ և դրա միջոցով արտացոլման երկու եղանակ է գտնում՝ օբյեկտիվ, ուղղակի-լմիջ-նորդավորված՝ ստանալով գոյականի, ածականի, բայի և մակբայի արստրակտ-քերականական կատեգորիայի երևույթ. դերանունը ըստ էության նույն գոյականն է, ածականը, թվականը, բայը և մակբայը՝ ներառած հայեցող սուբյեկտի (խոսողի) հարաբերությանը ու այդ ուղիով արտապատկերված։ Ուրեմն՝ ինչո՞ւ բայը, որ նյութական աշխարհի օբյեկտիվ պրոցեսների լեզվական-իմացարանական քերականական վերացարկված արտահայտությունն է, զուրս պիտի մնար հիշյալ հարաբերությունից և «աններելի» կերպով խախտեր օրինաչափությունը։

«Այսպես անել»-ը ցույց է տալիս օբյեկտիվ մի պրոցես (գործողություն), որի ինչպիսին լինելը տրված է սուբյեկտին՝ զգայական կամ էլ նախընթաց բայով լեզվական Ֆոնի վրա։

Բայական դերանունների՝ ներգործական և կրավորական սեռերին չպատկանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ սրանք ձևի ընդհանրու-

թյան մեջ ներառում են զգայական-կոնկրետ բովանդակություն (գործողություն, եղելություն, վարմունք), որի ներդրածման օբյեկտը (արտաքին թե ներքին), տրվում է պատկերի ձևով: Ինչպես ածականական դերանունները հարկավորություն չունեն տարբերակելու առարկայի որակը ըստ աստիճան-սերի և այլն, այնպես էլ բայական դերանունները՝ գործողությունը կամ Լեղելությունը ըստ սեռերի: Գործողությունը օբյեկտիվ ընկալմամբ տարբերակում է սեռը, որպեսզի անմիջաբար մտքին հաղորդի օբյեկտ-սուբյեկտային հարաբերությունը, իսկ զերանվամբ այդ հարաբերությունը մտքին է փոխանցվում միջնորդումներով՝ զգայական պատկերի մեջ:

Եթե այս իմաստով մոտենանք խնդրին, ապա կարելի է պնդել, որ բայական դերանունները սեռի տարբերակում ընդհանրապես չունեն, թեև ձևականորեն համընկնում են չեզոք սեռին:

Բայական դերանունները տարբերակում են եղանակային ու դերբայական ձևերը՝ դրսևորելով ձևաբանական առանձնահատկությունների ու շարահյուսական կիրառությունների այն ողջ հարստությունը, ինչ դրանց հարաբերակից բայերը:

Բայական դերանունները խոսքի մեջ հանդես են գալիս բայերին հատուկ ֆունկցիոնալ կիրառություններով՝ հարկավոր դրսևորելով իրենց բնորոշ առանձնահատկությունները, որ բխում են գործողություն, եղելություն, վարմունք սուբյեկտիվ հարաբերությամբ ցույց տալու դրանց երկբնույթ էությունից:

Սակրայական դերանուններ են բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն, եղելություն, վարմունքի պարագայական տարբեր հարաբերություններ սուբյեկտիվ հարաբերությամբ, օրինակ՝ այսպես, այդպես, այնպես, նույնպես, որպես, ինչպես, ուր, երբ, այսչափ, այստեղ, այնտեղ և այլն:

Ելական ընդունելով արդեն գործադրված սկզբունքը՝ վերստին ընդգծում ենք, որ եթե՝ մակբայները դրանք այն բառերն են, որ ցույց են տալիս գործողության, եղելության, վարմունքի պարագայական հարաբերությունները օբյեկտիվ և արտացոլմամբ, ապա հարաբերակից մակբայական դերանուններն էլ ցույց են տալիս նույնները՝ սուբյեկտիվ հարաբերությամբ, ու եթե խոսքի մեջ դրանք հեշտությամբ փոխարինում են միմյանց, ապա այդ հնարավորությունն իրագործվում է նույն օբյեկտի «նկարահանման» երկու ուղիներով՝ գոյություն, որոնք (ուղիները) նկարի վրա թողնում են իրենց բնորոշ հետքերը:

Բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողության, եղելության և վարմունքի տեղը սուբյեկտիվ հարաբերությամբ, կոչվում են տեղի մակբայական դերանուններ, դրանք են՝ այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, որտեղ, ուր:

Տեղի մակբայական դերանունները լինում են որոշյալ, անորոշ և ժխտական:

Որոշյալներն են՝ այստեղ, այդտեղ, այնտեղ, սրանք հոլովվում են: Անորոշներն են՝ որտեղ, ինչտեղ, ուր: «Ուրտեղ», «Ինչտեղ» անորոշ տեղի մակբայական դերանունները հոլովվում են՝ ստանալով հոգ ճիշտ այնպես, ինչպես որոշյալները, իսկ «ուր»-ը հոգով դառնում է բառի անուն-գոյական և նույնպես հոլովվում է, որը սակայն ձևաբանական առանձին արժեք չի ներկայացնում:

Ժխտական՝ ոչ մի տեղ.

Խոսքի մեջ տեղի մակրայական ղերանունները հանգես են գալիս պարագայի պաշտոնով իսկ ղերանուններին հատուկ բովանդակության սուբյեկտիվ հարաբերության կողմով՝ նաև բառեր ու նախադասություններ հարաբերելու ֆունկցիաներով:

Ինչու այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն, եղելություն և վարմունքի կատարման ժամանակը սուբյեկտիվ հարաբերությամբ, կոչվում են ժամանակի մակրայական ղերանուններ. *դրանք են՝ այժմ (այսժամ), այդժամ, այնժամ, նույնժամ, հիմա, այն ժամանակ և այլն:*

Ժամանակի մակրայական ղերանունները լինում են որոշյալ, անորոշ, ժխտական: *Որոշյալներն են՝ այժմ (այսժամ), այնժամ, այդժամ, նույնժամ, այն ժամանակ, հիմա, այսուհետև, այնուհետև, այդուհետև, սրանից հետո: Անորոշներն են՝ երբ, որ ժամանակ: Ժխտական՝ ո՛չ մի դեպքում, ո՛չ մի ժամանակ:*

Ձևի մակրայական ղերանունները լինում են որոշյալ, անորոշ, ժխտական: *Որոշյալներ՝ այսպես, այդպես, այնպես, նույնպես: Անորոշ՝ որպես, ինչպես: Ժխտական՝ ոչ մի կերպ, ոչ մի ձևով:*

Չափի-քանակի մակրայական ղերանունները լինում են՝ որոշյալ, անորոշ, ժխտական: *Որոշյալներ՝ այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ: Անորոշ՝ որչափ, ինչչափ: Ժխտական՝ ոչ մի չափով, ոչ մի:*

Պետք է նկատել, որ հաճախ չափի-քանակի և թվականական մակրայական ղերանունները փոխարինում են միմյանց. դա բնական է, որովհետև նույնպիսի փոխակերպումներ հնարավոր են նաև թվականների ու չափի-քանակի մակրայների միջև:

Թևթևակի ուշադրություն իսկ երևան կհանի այն իրողությունը, որ, իսկապես, ղերանունների լայն գործածության ասպարեզը խոսքի մեջ բարդ ստորադասական նախադասությունների բնադալառն է, ուր դրանք հանդես են գալիս հաճախակիանների ու հաճախակիանների ֆունկցիաներով: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ղերանունները իրենց երկրնային էությունով հնարավորություն ունեն արտահայտելու ինչպես օբյեկտի դադափարը (նյութական բովանդակություն՝ առարկա, հատկանիշ, գործողություն), այնպես էլ դրսևորելու հարաբերություն, որն արտահայտվում է բառեր ու նախադասություններ շաղկապելու դերով: Այսօրինակ ֆունկցիաների միասնությամբ որևէ այլ խոսքի մաս հանդես գալ չի կարող:

«Երբ Միֆայելը հասավ ավտոբուսով, բակում կանգնած էին քնդամենը երկու բեռնատար ավտոմեքենաներ» (*Մ. Արմեն «Յասիլ»*): «Երբ» անորոշ ժամանակի մակրայական ղերանունը, բովանդակելով ժամանակի դադափարը, դրանով իսկ նախադասության մեջ ստանձնել է ժամանակի պարագայի պաշտոն, բայց քանի որ ժամանակը նրանով արտապատկերվում է ոչ օբյեկտիվաբար, այլ սուբյեկտիվաբար, ապա այդ հարաբերությունն էլ իր դրսևորումն է գտել շաղկապի դերով:

Եթե փորձենք «Երբ» բառը փոխարինել ժամանակի տեղողություն ցույց տվող որևէ յուրականով (կամ ժամանակի մակրայով), ապա բարդ ստորադասական նախադասությունը կվերածվի բարդ համադասականի: Ահա՛ «Երեկոյան Միքայելը հասավ ավտոբուսով, բակում կանգնած էին քնդամենը երկու բեռնատար մեքենաներ»:

Պարզ է, որ այսպիսի «մետամորֆոզ» այլ կերպ չի կարելի բացատրել, քան այն հանդամանքով, որ դերանունը դոյականի համեմատությամբ ավելի բարդ «դոյացություն» է:

Թվում է, թե կարելի կլիներ ցույց տալ, որ բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասությունների մեջ էական տարբերություններից մեկն էլ այն է, որ դրանցից առաջինը աշխարհընկալման լեզվական այնպիսի արտահայտությունն է, երբ առավել ակնառու է սուբյեկտի «միջամտությունը» արտապատկերվածին, և, ընդհակառակը, բարդ համադասական նախադասությունները իրականության ավելի օբյեկտիվ լեզվական «նկարահանումներ» են, բայց դա մեզ շատ հեռու կտաներ:

О МЕСТОИМЕНИЯХ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Г. К. САРГСЯН

Р е з ю м е

В статье делается попытка выявить единую основу классификации местоимений. По мнению автора, такой основой может служить смысловая общность слов, исключая их морфологические особенности и синтаксические применения. Чтобы доказать этот тезис, автор обращается к логическому анализу целого ряда примеров и делает соответствующие выводы.